Հավելված
Հայաստանի Հանրապետության
ոստիկանության կրթահամալիրի պետի
2019 թվականի
մարտ -ի թիվ -Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՔՈԼԵՋԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետը (այսուհետ' Ֆակուլտետ) «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ՝ «Ոստիկանության սպա» որակավորմամբ կադրերի պատրաստման ուսումնական և հետազոտական գործընթացների կազմակերպումն ու իրականացումն ապահովող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումն է:

2. Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Կրթության մասին», «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ ոստիկանության պետի հրամաններով, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) ներքին իրավական ակտերով և այլ իրավական ակտերով:

3. Ֆակուլտետի անվանումն է'

հայերեն' «Ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետ»:

ռուսերեն' «Факультет средне-профессионального образования».

անգլերեն' «Faculty of Police Intermediate-Level Education».

4. Ֆակուլտետը, որպես Քոլեջի կառուցվածքային միավոր, ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով:

5. Ֆակուլտետի կանոնադրության հաստատումը, դրա փոփոխությունները և (կամ) լրացումները կատարվում են Կրթահամալիրի պետի հրամանով:

6. Ֆակուլտետն օժտված է սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններով:

7. Ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է Քոլեջի ռազմավարական ծրագրի և սույն կանոնադրության 2-րդ կետով նախատեսված իրավական ակտերի հիման վրա:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

8. Ֆակուլտետի ղեկավար մարմիններն են՝ ֆակուլտետի պետը, ֆակուլտետի խորհուրդը:

9. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Ֆակուլտետի պետը:

10. Ֆակուլտետի պետը հանդիսանում է Ֆակուլտետի ամբողջ անձնակազմի անմիջական պետը:

11. Ֆակուլտետի պետի լիազորություններն են՝

1) ղեկավարում է ֆակուլտետի աշխատանքները.

2) ղեկավարում է ֆակուլտետի ուսումնական, կազմակերպչական, դաստիարակչական աշխատանքները.

3) կազմակերպում և անցկացնում է միջամբիոնային խորհրդակցություններ.

4) վերահսկում է ուսումնական պլանների, առարկայական նկարագրերի, ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի կատարման ընթացքը, հանդիսանում է ուսումնական և նախաավարտական պրակտիկաների ղեկավար.

5) վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման ընթացքը.

6) հրավիրում է ֆակուլտետի խորհրդի նիստեր և մասնակցում Կրթահամալիրի ստորաբաժանումների կողմից հրավիրված նիստերին և խորհրդակցություններին.

7) ղեկավարում է ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտամանկավարժական մակարդակի բարձրացման աշխատանքները.

8) համակարգում և իրականացնում է համագործակցման աշխատանքներ Կրթահամալիրի այլ ստորաբաժանումների հետ.

9) օժանդակում է Քոլեջի ծառայողների և սովորողների հանրային ակտիվությանը և անցկացվող սպորտային-մշակութային միջոցառումներին:

12. Ֆակուլտետի պետի հրահանգները պարտադիր են Ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների և սովորողների համար:

13. Ֆակուլտետի գործունեության ընթացիկ հարցերի քննարկման համար Ֆակուլտետում գործում է խորհրդակցական մարմին՝ Ֆակուլտետի խորհուրդ:

14. Խորհրդի կազմը և աշխատակարգը հաստատում է Կրթահամալիրի պետը:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Ֆակուլտետի խնդիրներն են՝

1) պատրաստել ոստիկանական միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանության սպա» որոկավորմամբ կադրեր.

2) ապահովել ուսուցման որակի միջազգային (եվրոպական) չափանիշների ներդրումը.

3) իրականացնել համապատասխան բնագավառում ուսումնամեթոդական հետազոտություններ ու ստեղծագործական աշխատանքներ,

4) ապահովել կրթական գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը.

5) նպաստել սովորողների արժեհամակարգի ձևավորմանը' հիմնված ազգային և համամարդկային, մարդասիրական և բարոյական սկզբունքների վրա:

16. Ֆակուլտետի գործառույթներն են՝

1) կրթական ոլորտում՝

ա. կազմակերպել Ֆակուլտետի սովորողների ինքնուրույն և լսարանային աշխատանք.

բ. ապահովել կրթական ծրագրերով նախատեսված դասախոսությունների, գործնական, լաբորատոր և այլ պարապունքների պատշաճ անցկացումը.

գ. վերահսկել կրթության կազմակերպումը պետական չափորոշիչներին համապատասխան.

դ. կազմակերպել և վերահսկել քննաշրջանի ողջ ընթացքը.

ե. իր իրավասության շրջանակներում իրականացնել ուսուցման որակի մշտադիտարկում.

2) մեթոդական ոլորտում՝

ա. կազմակերպել և վերահսկել կրթական գործունեության մեթոդական և տեղեկատվական համակարգի ապահովումը (համակարգչային լսարանների, մասնագիտացված լաբորատորիաների ստեղծում և այլն).

բ. ստեղծել պայմաններ սովորողների ինքնուրույն գիտական, ստեղծագործական գործունեության, անհատական կարողությունների զարգացման համար:

17. Ֆակուլտետի լիազորություններն են՝

1) օգտագործել ժամանակակից կրթական, տեղեկատվական արդյունավետ տեխնոլոգիաները՝ իր առջև դրված խնդիրների և նպատակների իրագործման համար.

2) արդյունավետ օգտագործել Ֆակուլտետին հատկացված նյութատեխնիկական, տեղեկատվական ռեսուրսները.

3) պահպանել և բարձրացնել Քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթական ֆակուլտետի, ամբիոնների հեղինակությունը.

4) իրականացնել իր գործունեությունից բխող այլ լիազորություններ:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

18. Ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացը կազմակերպող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումը ամբիոնն է:

19. Ֆակուլտետի ամբիոններն են՝

1) լեզուների ամբիոն.

2) հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոն.

3) մարտական, ֆիզիկական և հատուկ տակտիկական պատրաստականության ամբիոն.

4) տեխնիկական առարկաների ամբիոն:

20. Ամբիոնի գործունեության ուղղություններն են՝ գիտահետազոտական, գիտամեթոդական, ուսումնական, ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպում և իրականացում:

21. Ամբիոնի գործունեությունը կանոնակարգվում է ամբիոնի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

22. Ամբիոնի գիտամանկավարժական կազմը բաղկացած է ամբիոնի հաստիքային դասախոսներից: Ամբիոնում պայմանգրային հիմունքներով կարող են վճարովի ծառայություններ մատուցել նաև այլ աշխատակիցներ:

23. Ամբիոնի գործունեության համար պատասխանատու է ամբիոնի պետը:

V. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊԵՐ

24. Ֆակուլտետը համագործակցում է՝

1) Կրթահամալիրի այլ ստորաբաժանումների հետ՝ համատեղ միջոցառումների (գիտաժողովներ, խորհրդակցություններ, կամ այլ ձևաչափերով իրականացվող միջոցառումների) կազմակերպման նպատակով.

2) պետական մարմինների և կազմակերպությունների հետ դասախոսական և տեսչական անձնակազմի վերապատրաստման, փորձի փոխանակման և այլ նպատակներով.

3) ներկայացնում է համապատասխան ստորաբաժանումներին Ֆակուլտետի գործունեության հաշվետվություն և ծրագրեր յուրաքանչյուր ուսումնական տարվա

կտրվածքով, ծառայողական և ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերով գրություններ (սովորողների տեղափոխման, հեռացման-ազատման, վերականգնման, ուսումնառության ընդհատման, խրախուսելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ և այլն):

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

25. Ֆակուլտետի առջև դրված խնդիրների ու գործառույթների պատշաճ և ժամանակին իրականացման պատասխանատվությունը կրում է Ֆակուլտետի պետը:

26. Ֆակուլտետի ծառայողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և աշխատանքային (ծառայությունների վճարովի մատուցման) պայմանագրով, սույն կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և սահմանված կարգով հաստատված այլ փաստաթղթերով: